Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 17-06-2024 թ. որոշմամբ
««ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՎՐԱՅԱԿԱՆ Փ. 9 44
1.3 Պետական գրանցման համարը		264.160.05889
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2002-08-13
1.5 ՀՎՀՀ-ն		00074765
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)93191997
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.aecp.am
1.8 Էլեկտրոնային փոստը		aecp@aecp.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Նունե Եղիազարյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	16	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Լույս հայի աչքերին	470,457,191
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Լույս հայի աչքերին	498,288
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	օպտիկական ակնոցներ,ակնոցների շրջանակներ	982,147
	բժշկ,պարագաներ՝ վիրահատական պարագաներ,դեղորայք,ցածր տես պարագաներ,գլիկոհեմոգլոբինի թեստեր	10,633,157
	բժշկական սարքավորումներ՝ ակնաբուժական մանրադիտակի մաս/բինոկուլյար և այլ ակնաբուժական սաքավորումներ	121,949,985
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Լույս հայի աչքերին	675,926,000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	767,153,000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	675,926,000	

Նշումներ՝

2023 թ-ին իրականցվել է« Լույս հայի աչքերին» բարեգործական ծրագիր ՀՀ մարզերում՝ Արագածոտն,Արմավիր,Շիրակ,Սյունիք,Լոռի,Կոտայքի Արարատի,Գեղարքունիքի,Տավուշ,Վայոց Ձոր,Երևան /ներառյալ մարզային ակն. կենտրոնների և Մանկական կուրության կանխարգելման գերազանցության կենտրոնի ծրագրերը և մանկական սքրինինգային ծրագրերը ՝ կանխարգելում/ հետազոտություն/ բուժում /վիրահատություն/ ակնոցների տրամադրում, անհաս նորածինների ակնային ստուգում և բուժում , մասնագիտական վերապատ. ,հանրային իրազեկություն ,ակն.կենտրոնի ստեղծում

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 14 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by
YEGHIAZARYAN
NUNE 6905570273
Date: 2024.08.05
16:46:28 AMT

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023թ.

ԵՐԵՎԱՆ 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

Baker Tilly Armenia CJSC
22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301/307/309
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertilly.am

24.06.2024

N 022414

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ.Գևորգյան

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայկական ակնաբուժության նախագիծ»
Բարեգործական Հիմնադրամի Հոգաբարձուներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Հայկական ակնաբուժության նախագիծ» Բարեգործական Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում եմ հաշվապահական հաշվառման քաղականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների:

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX
Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական

ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան ուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը ակրող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր

Մ. Պոնամարևա

24.06.2024թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	*2023թ.*	*2022թ.*
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	4	386,026	526,008
Տրված ընթացիկ կանխավճարներ	5	5,916	13,645
Դեբիտորական պարտքեր	6	1,610	4,338
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով		246	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	8,387	24,093
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*402,185*	*568,084*
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		*402,185*	*568,084*
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	8	2,813	7,529
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	9	5,033	4,898
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	357,932	520,491
Ընթացիկ պահուստներ	11	36,407	35,166
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*402,185*	*568,084*
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		*402,185*	*568,084*

Նունե Եղիազարյան

Տնօրեն

Աննա Հովհաննիսյան

Գլխավոր հաշվապահ

24.06.2024թ.

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	*2023թ.*	*2022թ.*
Եկամուտներ	12	767,153	882,979
Վարչական ծախսեր	13	(90,152)	(95,220)
Գործառնական այլ ծախսեր	14	(675,926)	(775,936)
Այլ ոչ գործառնական շահույթ / (վնաս)	15	(1,075)	(11,823)
Ֆինանսական տարվա զուտ շահույթ		-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		-	-

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	2023թ.	*2022թ.*
Զուտ շահույթ	-	-
Ճշգրտումներ՝		
Պահուստավորում	-	-
Դրամական միջոցների հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	-	-
Պաշարներ՝ (աճ)/նվազում	139,982	(14,992)
Դեբիտորական պարտքեր՝ (աճ)/նվազում	11,453	36,542
Կրեդիտորական պարտքեր՝ աճ/(նվազում)	(4,582)	7,562
Եկամուտներին վերաբերող շնորհներ՝ աճ/(նվազում)	(162,559)	(61,862)
Զուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	(15,706)	(32,750)
Զուտ (նվազում)/աճ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում	(15,706)	(32,750)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	24,093	56,843
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	8,387	24,093

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1 ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հիմնադրամի նպատակներն են՝

- Իրականացնել բարեգործական ծրագրեր սոցիալական, գիտական, կրթական ոլորտում:
- Իրականացնել բարեգործական ծրագրեր կապված բուժական օգնության ոլորտի հետ:

Հիմնադրամն, իր նպատակին համապատասխան, իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործունեություն, այդ թվում՝

- կազմակերպում է ուսումնական գործընթացներ,
- կազմակերպում է բարեգործական բուժ. օգնություն
- հիմնադրում է լրատվական միջոցներ:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը 31.12.2023թ. դրությամբ կազմում է 16 մարդ:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (''ՖՀՄՍ'') պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա:

Գործառնական և ներկայացման արժույթ

Կազմակերպության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է ''Հայկական ակնաբուժական նախագիծ'' Բարեգործական Հիմնադրամի գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական

հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պաշարներ

Պաշարները ներկայացված են ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի նվազա·ույնով: Ինքնարժեքը ներառում է իր մեջ ձեռքբերման և ձեռքբերման ու տեղափոխման հետ կապված ծախսերը: Իրացման զուտ արժեքը վաճառքի գինն է: Օգտագործման ժամանակ կիրառվում է առաջին մուտք առաջին ելք բանաձևը:

Դեբիտորական պարտքեր

Որպես դեբիտորական պարտք են դասակարգվում այն ֆինանսական ակտիվները, որոնք ստեղծվում են Հիմնադրամի կողմից ուղղակիորեն պարտապանին (դեբիտորին) ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով, բացառությամբ այն դեբիտորական պարտքերի, որոնք Հիմնադրամը մտադրված է անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառել: Սույն բաժնում նկարագրված մոտեցումները կիրառվում են նաև տրված կանխավճարների հաշվառման նկատմամբ:
Դեբիտորական պարտքը դուրս է գրվում հաշվեկշռից միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը):

Կրեդիտորական պարտքեր և մասհանումներ

Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում այն մարման ենթակա գումարները, որոնք ստեղծվում են Հիմնադրամի կողմից ուղղակիորեն պարտատիրոջից (կրեդիտորից) ապրանքներ կամ ծառայություններ գնելու միջոցով: Որպես կրեդիտորական պարտք են դասակարգվում նաև ստացված կանխավճարները:

Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են շնորհը գրանցելով որպես հետաձգված եկամուտ: Եկամուտներին վերաբերող շնորհները համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում են առանձին:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Հիմնադրամը անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Կազմակերպությունից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Շնորհներից եկամուտների և ծախսերի ճանաչում

Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները:
2023թ. ֆինանսական տարվա ընթացքում Հիմնադրամը իրականացրել է «Լույս հայի աչքերին» ծրագիրը «Հայկական ակնաբուժության նախագիծ» ԱՄՆ գրասենյակի, Շաքարախտի համաշխարհային հիմնադրամի կողմից ֆինանսավորված ՇՀՀ 20-1742 ծրագիր «Հայաստանի շաքարախտի ազգային ծրագիր և կուրության կանխարգելում ռետինոպաթիայից»: 2023թ. Հիմնադրամը իրականացրել է նաև հետևյալ ծրագրերը՝

- USAID ԱՄՆ *Միջազգային զարգացման գործակալության* կողմից ֆինանսավորված *Մանկական կուրության կանխարգելման ծրագիրը* (Մանկական ակնաբուժական ծառայությունների ամրապնդումը Հայաստանի հինգ մարզերում),
- Հայ օգնության Հիմնադրամի կողմից ֆինանսավորված «մանկական/մանկապարտեզային սքրինինգային» ծրագիրը:

Վերոնշյալ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացված եկամուտների հաշվին Հիմնադրամը կատարել է ծախսեր և որի չափով էլ, համաձայն ՀՀ հաշվապահական հաշվառման 20 «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ստանդարտի կատարվել է եկամտի ճանաչում:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Արտարժութային գործարքներից եկամուտները (վնասը) ներառում է արտարժութով ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատումից եկամուտը (վնասը):

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժութային հոդվածների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ:

4 ՊԱՇԱՐՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Տնտեսական և գրենական ապրանքներ	23	23
Վառելիք	612	310
Պահեստամասեր	5,666	6,046
Դեղորայք	112,097	278,734
Արագամաշ առարկաներ պահեստում	10,602	12,554
Ակնոցներ, շրջանակներ և տուփեր	170,394	180,679
Այլ	86,632	47,972
	386,026	526,318

5 ՏՐՎԱԾ ԸՆԹԱՑԻԿ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Տրված կանխավճարներ ծառայությունների գծով	5,916	11,313
Տրված կանխավճարներ նյութեր ձեռք բերելու գծով	-	2,332
Այլ նպատակով տրված կանխավճարներ	-	48,490
	5,916	62,135

6 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Դեբիտորական պարտք դրամաշնորհի գծով	1,610	3,638
Այլ	-	700
	1,610	4,338

7 ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Դրամական հոսքերի հաշվետությունում ներկայացված դրամական միջոցները և դրա համարժեքները ներառում են հետևյալը.

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Կանխիկ դրամ	68	55
Անկանխիկ դրամական միջոցներ բանկերում	8,319	24,038
	8,387	24,093

8 ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
''Մաստերկոմպ'' ՍՊԸ	30	30
''Էկոլոգիա Վ.Կ.Հ. '' ՍՊԸ	20	-
Ալիսա Ակնաբուժական Կենտրոն ՍՊԸ	-	30
''Հայաստանի էլ.ցանցեր'' ՓԲԸ	51	61
''Գազպրոմ Արմենիա''ՓԲԸ	93	128
Կարեն Գասպարյան ԱՁ	41	2
Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց ՓԲԸ	-	100
''Նյու Վեյ'' ՓԲԸ	8	6
Փրայմ ինշուրընս բրոքերս ՍՊԸ	2,100	3,592
''ՄՏՍ Հայաստան'' ՓԲԸ	13	12
Հարություն Վարոսյան ԱՁ	-	2,665
''Յուքոմ'' ՓԲԸ	58	38
Արտյոմ Սահակյան ԱՁ	7	136
'' Տելեկոմ Արմենիա '' ՓԲԸ	39	-
''Ս.Վ. Մալայանի անվ. ակնաբուժական կենտրոն'' ՓԲԸ	55	14
'' Տոյոտա Երևան'' ՍՊԸ	40	-
Էկենգ 501	-	501
Ֆլեշ ՍՊԸ	-	2
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալ	20	-
Այլ	238	211
	2,813	7,529

9 ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԲՅՈՒՋԵԻ ԳԾՈՎ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր եկամտային հարկի գծով	4,917	4,751
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր գույքահարկի գծով	116	116
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր դրոշմանիշ.վճարի գծով	-	31
	5,033	4,898

10 ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Մնացորդը առ 01 հունվար	**520,491**	**582,352**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	656,325	821,113
Տարվա ընթացքում օգտագործած շնորհի գումարը	(818,884)	(882,974)
Մնացորդը առ 31 դեկտեմբեր	**357,932**	**520,491**

11 ԸՆԹԱՑԻԿ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Չօգտագործված ամենամյա արձակուրդների պահուստ	36,407	35,166
	36,407	35,166

12 ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Դրամաշնորհներից եկամուտների ճանաչում	767,153	882,979
	767,153	882,979

13 ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Աշխատանքի վարձատրություն	(49,652)	(53,672)
Գործուղման ծախսեր	(151)	(638)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(21,592)	(24,364)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(2,814)	(2,625)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(5,086)	(4,914)
Բանկային ծախսեր	(5,812)	(3,915)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	(368)	(417)
Վարչական այլ ծախսեր	(4,677)	(4,675)
	(90,152)	(95,220)

14 ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Կանոնադրական նպատակներով իրականացված ծախսեր	(675,926)	(775,936)
	(675,926)	(775,936)

15 ԱՅԼ ՈՉ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՎՆԱՍ

(հազար դրամ)

	2023թ.	2022թ.
Արտարժույթի փոխարժեքային տարբերութ. եկամուտներ	3,669	4,110
Արտարժույթի փոխարժեք. տարբերութ. ծախսեր	(4,744)	(15,932)
	(1,075)	(11,822)

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 05.08.2024 16:44